

էինք ածուած ծածկադիր նամակներ զրելու համար, բացատրելով, թէ ինչպէս պիտի բանալ այդ մեղանով ստացուած նամակը:

Նրան ես յայտնեցի, որ գնում եմ Կովկաս, իսկ մի-երկու ամսից պիտի անցնեմ Տրապիզոն: Մինչ այդ նա խոստացաւ՝ մի լաւ կազմակերպութիւն ստեղծել Պոլսում եւ ինձ զրել մանրամասն: Միւս կողմէն ժամանակ խոստացաւ թղթակցութիւններ ուղարկել «Հնչակ»-ին, եւ այդպէս մենք բաժանուեցինք իրարից:

Արիւիւրեանը ինձ տուած խոստումներից եւ ո՛չ մէկը կատարեց: Նա ո՛չ միայն ինձ ոչինչ չզրեց, այլ եւ չպատասխանեց, թէ Վլադիկաւկասից եւ թէ՛ Տրապիզոնից զրածս մի քանի նամակներին:

Այդպէս մնաց, մինչեւ որ մենք կրկին անգամ տեսուեցինք իրար հետ Պոլսում ճիշդ մէկ տարի յետոյ, բայց բոլորովին տարբեր հանգամանքներում:

## ԼՈՒՅՑԱՏՏԻ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԶՈՒԳԱՅԵՌ ՄԸ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

### VI

### ԼՈՐԻՍԻ ՎԵՐԵԼԲԸ

Լօրիս-Մէլիքով նոյն ակնուական դժերն ունէր, ինչպէս Լուցցատտի: Անհունապէս բարձր Լոնդոնի իր հրէային պաշտօնակցէն — Դիպրայէլին — նա, ըստ ժամանակակիցներու վկայութեան, ազատ մնաց կառիէրիզմի ստորին մտահոգութիւններէ, գեանաքարչ ինկարկումներէ ու մանր փառասիրութիւններէ եւ վտահանցաւ իր աստղին, իր ներքին անսովոր կարողութիւններուն, իր զինուորական եւ վարչական տաղանդին: Նա պէտք չունէր մարդկային արժանապատուութիւնը ստորացընող միջոցներուն՝ իր շանթահարող վերելքը զիւրացնելու համար: Նա չփոխեց իր կրօնը եւ մնաց հայ լուսաւորչական:

Անշուշտ, ցարերու ապարանքներում, ուս աչքառու, բարձրաստիճան պաշտօնեաներու շրջաններուն մէջ՝ նա եւս խորթ ու օտար կը զգար ինքզինքը, ինչպէս համանման պայմաններու մէջ Դիպրայէլի: Նա կը տեսնէր իր շուրջը թշնամութիւն ու նախանձ: Ռուս ուղղափառութեան քուրմերը կը զիտէին զինքը, որպէս անբաղձալի intrus մը...

Սակայն ամէնքը կը զգային անոր ոյժը եւ գերազանցութիւնը: Նա Կարսի հերոսն էր, որ նուաճեր էր անառիկ համարուած բերդը, ջարդ էր տուեր Ղազի Մուխտար փաշային եւ վաստակեր զինուորական ամենէն չքեղ դափ-

նիները: Այդ բաւական չէր: Նա ստացեր էր եւ անզուգական կազմակերպիչի ու վարչադէտի համբաւը: Երբ 1879 թուականին Սարկովի նահանգին մէջ մէկէն ի մէկ պայթեցաւ ժամտախտի համաճարակը, որ արագութեամբ կը տարածուէր ու կը սպառնար ողջ Եւրոպային, ուս կառավարական շրջանները, գլուխին կորցրած, իրենց անճարութեան մէջ խորհեցին, որ մէկ մարդ միայն կրնար փրկել կացութիւնը, չքայնել ահարկու վտանգը:

— Լօրիս-Մէլիքովը: Եւ նա արդարացուց այդ հաւատը, ստանձնեց Սարկովի նահանգապետութիւնը, մտաւ համաճարակի բոյնը, աբազ, կտրուկ, վճռական միջոցներով կազմակերպեց կռիւը սարսափելի պատուհասին դէմ եւ կարճ ժամանակում մարեց ժամտախտի հրնոցը:

Այնուհետեւ հայազգի զօրավարը կը քալէր աւելի հպարտ, գլուխը բարձր՝ Պետերբուրգի կամարիլլայի սալօններում, կը քալէր, սպանելով աւելի մեծ օրուան, երբ գեներալ-նահանգապետութեանէն պիտի բարձրանար մինչեւ նախարարապետութիւն եւ իր ձեռքը պիտի առնէր ահագին կայսրութեան ղեկը:

Այդ օրն ալ հասաւ շուտով: Ռուս յեղափոխական կուսակցութիւնը — «Նարոդնայա Վօլիա» — ուժովցած բոլոր մտաւորական եւ ազատութեամբ տարբերու համակրութեամբ, ծաւալեց արտակարգ դաւադրական գործունէու-